ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» ապրիլ 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-32/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Ա/Ձ Գալուստ Աղումյանի 05.04.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **<u>Ա/Ձ Գալուստ Աղումյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

Ա/Ձ Գալուստ Աղումյանը (այսուհետ նաև՝ Մասնակից) 05.04.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՁՔ-Ն6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 26.03.2016թ. թիվ 3 որոշման 1.1 կետով Մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժվել է, հետևյալ հիմնավորմամբ, մեջբերում.

<<1.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 47-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց Ա/Ձ Գալուստ Աղումյանի կողմից ներկայացված հայտը մերժել՝ հետևյալ հիմնավորմամբ՝

- սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 4.3 կետի <<դ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը>>:

Բողոքաբերը գտնում է, որ Մասնակցի հայտը մերժման ենթակա չէր, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 168-Ն որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի (այսուհետև՝ Կարգ/ 47-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի (այսուհետև՝ Հրավեր) ՄԱՍ I-ի 7.5 կետի 2-րդ պարբերությամբ սահմանված դրույթը, համաձայն որոնց Պատվիրատուն հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով պետք է ծանուցեր առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն Հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն Հրավերի 1-ին մասի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում նոր միայն հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Սակայն Պատվիրատուն gnumnerlusavan@mail.ru էլեկտրոնային փոստի միջոցով Մասնակցի aghumyang@mail.ru էլեկտրոնային փոստին 22.03.2016 թվականին ժամը 2:04-ին ուղարկել է (փոստից արտատպված ֆայլը կցվում է) «ՁՔ-Ν6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի 18.03.2016 թվականի ժամը 09:30-ի կազմված թիվ 2 արձանագրությունը (պատճենը՝ կցվում է), որը չնայած նրան, որ հրապարակվել է Կարգի 47.1 կետի խախտմամբ

(www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարության լուսապատճենը կցվում է)՝ թիվ 2 Արձանագրության 5.1 կետի «բ» պարբերությամբ նշվում է, որ մեջբերում. «ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերը», մինչդեռ aghumyang@mail.ru էլեկտրոնային փոստին 22.03.2016 թվականին ժամը 2:04-ին ուղարկված թիվ 2 արձանագրությունից հետո որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ ոչ մի ծանուցում մինչ օրս չի ներկայացրել Պատվիրատուի կողմից, բայց մեկ այլ թիվ 3 արձանագրությամբ նշում է, որ քանի որ սահմանված ժամկետում չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև Հրավերի 1-ին մասի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերը, ապա Հանձնաժողովը որոշում է ընդունել մերժել է Ա/Ձ Գալուստ Աղումյանի ներկայացրած հայտը, ինչը ելնելով վերը շարադրվածից, բողոքաբերը գտնում է, որ անհիմն է:

Նշված թյուր հիմնավորումներով Մասնակցի հայտը մերժելով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները: Մասնակիցը ծանուցված չլինելով, տեղեկացված չլինելով չի կարողացել, հնարավորություն չի ունեցել Ընթացակագին իր հետագա մասնակցությունն ապահովելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ ***Մասնակիցը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել «Չարենցավանի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով «ՁՔ-N6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.03.2016 թվականի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը:***

Ա/Ձ Գալուստ Աղումյանը, մասնակցելով 11.04.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-32/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքը:

2. «Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Կենտրոնին ուղղված 11.04.2016թ. թիվ 129-3 գրությամբ ներկայացրել է «ՀՔ-Ն6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ «Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 18.03.2016թ. ժամը 09:30-ին: Ընթացակարգին մանսակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 5 կազմակերպություն: Հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը ընդհատվել է և շարունակվել 22.03.2016թ. ժամը 09:30-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 44-րդ կետի դրույթներին համապատասխան՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Գալուստ Աղումյանը:

Կարգի 47.1-րդ կետի դրույթներին համապատասխան՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Կարգի 47-րդ դրույթներին համապատասխան 22.03.2016թ.

1. հարցում է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մանսակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման

չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

2. Էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ Ա/Ձ Գալուստ Աղումյանին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.03.2016թ. ստացվել է դրական եզրակացություն՝ առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:

Ա/Ձ Գալուստ Աղումյանի կողմից սահմանված ժամկետում համապատասխան փաստաթղթերը չի ներկայացվել և հայտը գնահատվել է անբավարար:

Օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի և Կարգի 47-րդ կետի դրույթներին համապատասխան՝ 26.03.2016թ. փաստաթղթերի ներկայացման պահանջ է առաջադրվել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Բրուս» ՍՊԸ-ին: 29.03.2016թ. «Բրուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը:

Օրենքի 9-րդ հոդվածի, 31-րդ հոդվածի 6-րդ մասի 33-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝

1. Ընտրված մասնակից է ճանաչվել «Բրուս» ՍՊԸ-ն.
2. www.gnumner.am ինտերնետային կայքում հրապարակվել է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին.
3. Ծանուցվել է «Բրուս» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ «Բրուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են տուժանքի մասին համաձայնությունը և պայամանգրի երկու օրինակները՝ կնքված և ստորագրված «Բրուս» ՍՊԸ-ի կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ 07.04.2016թ. «Բրուս» ՍՊԸ-ի հետ կնքվել է «Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման թիվ «ՁՔ-Ν6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» գնման պայմանագիրը:

3. ԳԲԽ-32/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-32/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՁՔ-Ν6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Գալուստ Աղումյանը «Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՁՔ-Ν6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2016թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետով Ա/Ձ Գալուստ Աղումյանը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2016թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5.1 կետի «բ» ենթակետով ամրագրվել է հետևյալը. «Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերը»:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2016թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը 22.03.2016թ. Պատվիրատուի կողմից ուղարկվել է Ա/Ձ Գալուստ Աղումյանի «aghumyang@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.03.2016թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով Ա/Ձ Գալուստ Աղումյանի հայտը

մերժվել է՝ սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու հիմնավորմամբ:

7. «Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՔ-Ն6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ***պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 01.04.2016թ. և պայմանագրի կնքման անգործության ժամկետը սահմանվել է մինչև 06.04.2016թ. ներառյալ:***

8. ***07.04.2016թ.*** «Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Բրուս» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ՀՔ-Ն6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով պայմանագիր:

9. Ա/Ձ Գալուստ Աղումյանի կողմից 05.04.2016թ. բողոք է ներկայացվել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին:

4. ԳԲԽ-32/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Ա/Ձ Գալուստ Աղումյանի 05.04.2016թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի 11.04.2016թ. թիվ 129-3 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն ***նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ ***գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ:***

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝

1.Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

2. Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում՝ հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

3.Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

Ա/Ձ Գալուստ Աղումյանը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին բողոք է ներկայացրել ***05.04.2016թ.-ին***: Բողոքաբերը ***<u>ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել «Զարենցավանի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՁՔ-Ν6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային</u>***

համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.03.2016թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված Մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը:

Կենտրոնը արձանագրում է, որ Մասնակցի կողմից 05.04.2016թ. ներկայացրած բողոքով չի ներկայացվել Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ որպես միջանկյալ ընթացակարգ՝ ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին միջնորդություն. այն է՝ ***գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ:***

Միևնույն ժամանակ Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:***

«Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՔ-Ն6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ***պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը www.gnumner.am համացանցային կայքում Պատվիրատուի կողմից հրապարակվել է 01.04.2016թ. և պայմանագրի կնքման անգործության ժամկետը սահմանվել է մինչև 06.04.2016թ. ներառյալ:***

07.04.2016թ. Պատվիրատուն կնքել է «ՀՔ-Ն6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով գնման պայմանագիր «Բրուս» ՍՊԸ-ի հետ:

Այսպիսով, Մասնակցի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին բողոք է ներկայացվել ***05.04.2016թ.***: Մասնակիցը բողոքով չի ներկայացրել միջանկյալ ընթացակարգ՝ ժամանակավոր միջոց կիրառելու վերաբերյալ որևէ միջնորդություն, որով կպահանջեր կասեցնել Ընթացակարգը, Պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի որևէ որոշման կատարումը: Մասնակիցը բողոքով պահանջել է ***դադարեցնել «Չարենցավանի Ն 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով «ՀՔ-Ն6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում***

կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.03.2016 թվականի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը, որով մերժվել է Մասնակցի հայտը:

Համաձայն Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի՝ բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև Խորհրդի կողմից միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելը պատվիրատուն իրավունք չունի կնքելու պայմանագիր:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից 05.04.2016թ. բողոքով չի ներկայացվել միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ միջնորդություն, ուստի բողոքը ինքնաբերաբար չի կասեցրել Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու ընթացակարգը:

Հետևաբար, Պատվիրատուն, առաջնորդվելով Օրենքի 9-րդ հոդվածի դրույթներով, պայմանագիր կնքելու անգործության ժամկետը լրանալուց հետո կնքել է գնման պայմանագիր:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ ***պայմանագրի կնքված լինելու պայմաններում***, Մասնակցի՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.03.2016 թվականի թիվ 3 արձանագրությամբ իր հայտը մերժելու վերաբերյալ կայացված ***որոշումը դադարեցնելու պահանջը դառնում է առարկայազուրկ***, քանի որ Խորհուրդն Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ պայմանագիր կնքելուց հետո կարող է ընդունել կնքված պայմանագիրը չեղյալ հայտարարելու կամ պատվիրատուի՝ գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին որոշումներ, ինչպիսի պահանջ, սակայն Մասնակցի կողմից չի ներկայացվել:

Միևնույն ժամանակ Կենտրոնը արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից Մասնակցին հայտերի բացման նիստի արձանագրությունը ուղարկելը ըստ էության չի կարող դիտվել որպես Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի իմաստով պատշաճ ծանուցում, քանի որ համաձայն Օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ մասի՝ հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին: Մինչդեռ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող

աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից ներկայացված բողոքի պահանջը բավարարելու վերաբերյալ որոշումը, այն է՝ «Դադարեցնել «Չարենցավանի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՁՔ-Ν6ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.03.2016թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված Մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը»՝ Խորհուրդը կարող էր ընդունել մինչև տվյալ Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելը, գտնում ենք, որ Ա/Ձ Գալուստ Աղումյանի կողմից 05.04.2016թ. ներկայացված բողոքը առարկայազուրկ է, ուստի առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-32/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան